ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3-Ա

<<16>> հունվարի 2014 թվական գյուղ Զարիշատ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Զարիշատի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Զարիշատի գյուղական համայնքի ղեկավարին՝
   ա/ քանի որ հարկային գործակալը զբաղվում է հարկերի հավաքագրման գործընթացով, որը իրենից ներկայացնում է մասնագիտական գործունեություն, սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ առաջարկելով համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ավելացնել 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ հաստիքը,
   բ/ կրճատել հարկային գործակալի հաստիքը:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Զարիշատի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի << Հայաստանի Հանրապետության Զարիշատի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 20-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զարիշատի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԺԱՍՄԵՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ կողմ ……

ԵՂՍԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ կողմ ……

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ կողմ ……

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ՝ կողմ ……

ՎԱՉԳԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ՝ կողմ ……

ԶԱՐԻՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

<< 16 >> հունվարի 2014 թվական
գ. Զարիշատ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զարիշատի համայնքի ավագանու
2014 թվականի հունվարի 16-ի թիվ 3-Ա որոշման

1. Աշխատակիցների քանակը՝ 5:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Քաղաքական	համայնքի ղեկավար		142000	1
Համայնքային ծառայություն	գլխավոր խումբ	աշխատակազմի քարտուղար	82000	1
	կրտսեր խումբ	առաջատար մասնագետ 1-ինկարգի մասնագետ	80000 60000	1 1
Տեխնիկական աշխատողներ	վարորդ		59524	1
Ընդամենը			-	5

ԶԱՐԻՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

<< 16 >> հունվարի 2014 թվական
գ. Զարիշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< 15 >> հունվարի 2014 թվական

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Զարիշատ
Հեռ. (093) 87-88-82

N: 4

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գևորգյան

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Զարշատի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 3-Ա որոշումը:

Որոշմամբ նախատեսվում է հարկային գործակալի հաստիքը ներառել համայնքային ծառայողների անվանացանկում 1-ին կարգի մասնագետ /3.2-1 ծածկագրով/, կրճատելով այն տեխնիկական սպասարկման անձնակազմից:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Զարիշատի գյուղական համայնքի ղեկավար՝ Համլետ Խորիկյան